ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ 2018-2019 ԹԹ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

ՔՐԵԱԿԱՆ ՈԼՈՐՏ

(քրեական գործեր, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող միջնորդություններ)

2019 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվել է 5138 քրեական գործ, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին ու դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող 21698 միջնորդություն (ընդհանուրը՝ 5138+ 21698=26836)[1]:

Ստացված 5138 քրեական գործից ավարտվել է 2483-ը (48,3%):

Ստացված 21698 միջնորդություններից ավարտվել է 20496-ը (94,4%):

(Ընդհանուր առմամբ ավարտվել է 22979 դատական գործ (2483+20496=22979) 85.6%):

Համեմատության կարգով նշենք, որ 2018 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվել է 4844 քրեական գործ, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին ու դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող 22474 միջնորդություն (ընդհանուրը՝ 4844+ 22474=27318)[2]:


Ստացված 4844 քրեական գործից ավարտվել է 2968-ը (61,3%):

Ստացված 22474 միջնորդություններից ավարտվել է 21139-ը (94%):

(Ընդհանուր առմամբ ավարտվել է 24107 դատական գործ (2968+21139=24107) 88.2%):

[1] Հիշյալ թվի մեջ ներառված են նաև նախորդ հաշվետու ժամանակահատվածից փոխանցված գործերը: Տվյալ դիտարկումը վերաբերելի է նաև մյուս տեսակի դատական գործերին և բողոքներին:

[2] Հիշյալ թվի մեջ ներառված են նաև նախորդ հաշվետու ժամանակահատվածից փոխանցված գործերը: Տվյալ դիտարկումը վերաբերելի է նաև մյուս տեսակի դատական գործերին և բողոքներին:



2019 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից ավարտված 2483 քրեական գործերով դատական ակտ է կայացվել 3282 անձի վերաբերյալ, այդ թվում՝ 1973 գործով (79,5%) կայացվել է դատավճիռ՝ 2672 անձի նկատմամբ, 450 գործով (18,1%) կայացվել է քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում՝ 550 անձի վերաբերյալ, 58 գործով (2,4%)՝ 58 անմեղսունակ անձանց վերաբերյալ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ, 1 գործով 1 անձի վերաբերյալ կայացվել է դատական ծախսերի բռնագանձման հարցը քննության առնելու մասին որոշում, 1 գործ 1 անձի վերաբերյալ քննության առարկա չի դարձվել՝ վերադարձվել է դատախազություն:

Համեմատության կարգով նշենք, որ 2018 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից ավարտված 2968 քրեական գործերով դատական ակտ է կայացվել 3740 անձի վերաբերյալ, այդ թվում՝ 2295 գործով (77,3%) կայացվել է դատավճիռ՝ 3034 անձի նկատմամբ, 607 գործով (20,5%) կայացվել է քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում՝ 639 անձի վերաբերյալ, 64 գործով (2,2%)՝ 65 անմեղսունակ անձանց վերաբերյալ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ, 1 գործով 1 անձի վերաբերյալ կայացվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցը մերժելու մասին որոշում, 1 գործ 1 անձի վերաբերյալ քննության առարկա չի դարձվել՝ դատախազի կողմից ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքով:

ՀՀ դատարանների կողմից հաշվետու ժամանակահատվածում կայացվել է 215 դատական ակտ 254 անձի (254:3222*100=7,9%) վերաբերյալ, որից 195 (76,8%) անձ

ձեռք է բերել լրիվ արդարացվածի կարգավիճակ, իսկ 59 (23,2%) անձ՝ մասնակի արդարացվածի կարգավիճակ:[3]

Հիշյալ 254 դատական ակտերից 193 դատական ակտ (144-ը լրիվ, 52-ը մասնակի)՝ 229 անձի վերաբերյալ (174-ը լրիվ, 55-ը մասնակի), 2019 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ մտել է օրինական ուժի մեջ:

Համեմատության կարգով նշենք, որ 2018 թվականի ընթացքում լրիվ կամ մասնակի արդարացվել է 241 (241:3673*100=6,5%) *անձ, որից 212-ը (212:3673*100=5,8%)՝ լրիվ, իսկ 29-ը (29:3673*100=0.8%)՝ մասնակի:*

Այսինքն, 2018 թվականի համեմատությամբ 2019 թվականին արդարացվածների քանակն ավելացել է 13-ով (5,4%):

2019 թվականի ընթացքում դատապարտվել է 2456 (2672-(254-38)=2456) 91,9% (2456:2672*100=91,9%), որից 1556 անձի նկատմամբ կայացված դատավճիռները հաշվետու ժամանակահատվածում մտել են օրինական ուժի մեջ:

Հիշյալ 1556 անձանցից՝

- ազատազրկման ձևով պատիժ է նշանակվել 1037 (66,6%) անձի նկատմամբ,
- կալանքի ձևով՝ 57 (3,7%) անձի նկատմամբ,
- տուգանքի ձևով՝ 431 (27,7%) անձի նկատմամբ,
- այլ պատժի կամ հարկադրանքի միջոցի ձևով՝ 31 (2%) անձի նկատմամբ:

Պատիժը պայմանականորեն չի կիրառվել 437 անձի նկատմամբ (437:(1037+57=1094)*100=40%):

*Համեմատության կարգով նշենք, որ 2018 թվականի ընթացքում դատապարտվել է 2809 (3034-(241-16)=2809) 92,6% (2809:3034*100=92,6%) անձ, որից 1963 անձի նկատմամբ կայացված դատավճիռները հաշվետու ժամանակահատվածում մտել են օրինական ուժի մեջ:*

Հիշյալ 1963 անձանցից՝

- ազատազրկման ձևով պատիժ է նշանակվել 1148 (58,5%) անձի նկատմամբ,

- կալանքի ձևով՝ 142 (7,2%) անձի նկատմամբ,

- տուգանքի ձևով՝ 594 (30,2%) անձի նկատմամբ,

- այլ պատժի կամ հարկադրանքի միջոցի ձևով՝ 79 (4,1%) անձի նկատմամբ:

---

[3] Հիշյալ թվերի մեջ ներառված են նաև քրեական գործի վարույթը կարճելու մասին ՀՀ դատարանների կողմից կայացված որոշումները (32 դատական ակտ՝ 38 անձի վերաբերյալ):

*Պատիժը պայմանականորեն չի կիրառվել 757 անձի նկատմամբ (757:(1148+142=1290)*100=58.7%):*

Այսպիսով, 2019 թվականի ընթացքում՝ 2018 թվականի համեմատությամբ, ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացված քրեական գործերի քանակն աճել է 294-ով (5138-4844=294) 5,7% (294:4844*100=6,1%), ըստ ավարտված գործերի՝ դատի տրված անձանց թիվը նվազել է 458-ով (3740-3282=458) 12.3% (458:3740*100=12.3%), դատապարտվածների թիվը նվազել է 353-ով (2809-2456=353), դատապարտյալների թիվը նվազել է 407-ով (1963-1556=407) 20,7% (407:1963*100=20,7%), անձանց թիվը, որոնց նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել նվազել է 320-ով (757-437=320) 42,3% (320:757*100=42,3%), իսկ արդարացվածների թիվն ավելացել է 13-ով (254-241=13) 5,4% (13:241*100=5,4%):

Հարկ է նշել, որ ինչպես 2018 թվականին, այնպես էլ 2019 թվականին դատապարտված անձանց թվում որոշակի նվազումներով հանդերձ զգալի թիվ է կազմել գողության, առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության համար դատապարտվածների քանակը:

Այսպես.

- 2018 թվականի ընթացքում գողության համար (ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդված)՝ 387 անձ (դատապարտվածների թվի 13,8%-ը, 387:2809*100=13,8%), առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության համար (ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդված)՝ 181 անձ (դատապարտվածների թվի 6,4%-ը, 181:2809*100=6,4%):

- 2019 թվականի ընթացքում գողության համար (ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդված)՝ 346 անձ (դատապարտվածների թվի 14%-ը, 346:2456*100=14%), առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության համար (ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդված)՝ 86 անձ (դատապարտվածների թվի 3,5%-ը, 86:2456*100=3,5%), դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդված)՝ 90 անձ (դատապարտվածների թվի 3,7%-ը, 90:2456*100=3,7%):

Այսպիսով, 2019 թվականի ընթացքում՝ 2018 թվականի համեմատությամբ գողության համար դատապարտվածների թիվը նվազել է 41-ով (387-346=41) 10,6%

(41:387*100=10,6%), առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության համար դատապարտվածների թիվը նվազել է 95-ով (181-86=95) 52.5% (95:181*100=52.5%):

Դրանից բացի, զգալի նվազում է արձանագրվել նաև համեմատվող ժամանակահատվածում դիտարկված ներքոհիշյալ հանցագործությունների համար դատապարտվածների թվում:

Այսպես.

- Ծեծի համար (ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդված) 2018 թվականին դատապարտվել է 51 անձ, իսկ 2019 թվականին՝ 45, նվազումը՝ 6 (51-45=6) անձ (11.8%): Հիշյալ հոդվածով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 2017 թվականին դատապարտվել է 65 անձ:

- Մարդուն առևանգելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդված) 2018 թվականին դատապարտվել է 28 անձ, իսկ 2019 թվականին՝ 24, նվազումը՝ 4 (28-24=4) անձ (14.3%):2017 թվականին դատապարտվել է 43 անձ:

- Բնակարանի անձեռնմխելիությունը խախատելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդված) 2018 թվականին դատապարտվել է 18 անձ, իսկ 2019 թվականին՝ 11, նվազումը՝ 7 (18-11=7) անձ (38.9%):2017 թվականին դատապարտվել է 21 անձ:

- Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդված) 2018 թվականին դատապարտվել է 2 անձ, իսկ 2019 թվականին՝ 0, նվազումը՝ 2 (2-0=2) անձ: 2017 թվականին դատապարտվել է 5 անձ:

- Գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդված) 2018 թվականին դատապարտվել է 13 անձ, իսկ 2019 թվականին՝ 12, նվազումը՝ 1 (13-12=1) անձ: Հիշյալ հոդվածով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 2017 թվականին դատապարտվել է 19 անձ:

- Ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդված) 2018 թվականին դատապարտվել է 59 անձ, իսկ 2019 թվականին՝ 28, նվազումը՝ 31 (59-28=31) անձ (52,5%): 2017 թվականին դատապարտվել է 93 անձ:

- Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդված) 2018 թվականին դատապարտվել է 66 անձ, իսկ 2019 թվականին՝ 39, նվազումը՝ 27 (66-39=53) անձ (41%): Հիշյալ հոդվածով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 2016 թվականին դատապարտվել է 116 անձ, իսկ 2017 թվականին՝ 119:

- Տրանսպորտային միջոցը հարբած կամ տասնվեց տարին չլրացած անձին հանձնելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 243-րդ հոդված) 2018 թվականին դատապարտվել է 2 անձ, իսկ 2019 թվականին՝ 2 անձ: Հիշյալ հոդվածով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 2016 թվականին դատապարտվել է 26 անձ, իսկ 2017 թվականին՝ 4:

- Ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդված) 2018 թվականին դատապարտվել է 3 անձ, իսկ 2019 թվականին՝ 2, նվազումը՝ 1 (3-2=1) անձ: Հիշյալ հոդվածով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 2017 թվականին դատապարտվել է 8 անձ:

- Խուլիգանության համար (ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդված) 2018 թվականին դատապարտվել է 49 անձ, իսկ 2019 թվականին՝ 31, նվազումը՝ 18 (49-31=18) անձ (36.7%): Հիշյալ հոդվածով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 2016 թվականին՝ 79 անձ, իսկ 2017 թվականին՝ 57 անձ: Այսինքն՝ կարող ենք արձանագրել, որ նշված հոդվածով վերջին տարիների ընթացքում դատապարտվածների թվում տեղի է ունեցել դինամիկ նվազում:

- Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդված) 2018 թվականին դատապարտվել է 22 անձ, իսկ 2019 թվականին՝ 12, նվազումը՝ 10 (22-12=10) անձ: 2017 թվականին դատապարտվել է 31 անձ:

- Սուտ մատնության համար (ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդված) 2018 թվականին դատապարտվել է 36 անձ, իսկ 2019 թվականին՝ 23, նվազումը՝ 13 (36-23=13) անձ (36.1%):2017 թվականին դատապարտվել է 80 անձ:

Զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր հափշտակելու կամ շորթելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդված) 2018 թվականին դատապարտվել է 7 անձ, իսկ 2019 թվականին՝ 4, նվազումը՝ 3 (7-4=3) անձ:

- Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդված) 2018 թվականին դատապարտվել է 22 անձ, իսկ 2019 թվականին՝ 2, նվազումը՝ 20 (22-2=20 անձ (90,9%):

Միաժամանակ, աճ է արձանագրվել ստորև ներկայացվող հանցագործությունների համար դատապարտվածների թվում:

Այսպես.

- Սպանության համար (ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդված) 2018 թվականին դատապարտվել է 13 անձ, իսկ 2019 թվականին՝ 15, աճը՝ 2 (15-13=2) անձ (15,4%): Հիշյալ հոդվածով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 2015 թվականին դատապարտվել է 17 անձ, 2016 թվականին՝ 21, իսկ 2017 թվականին դատապարտվել է 27 անձ: Այսինքն՝ կարող ենք արձանագրել, որ նշված հոդվածով երեք տարիների ընթացքում դատապարտվածների թվում տեղի է ունեցել դինամիկ աճ, որից հետո՝ 2018 թվականին, տեղի է ունեցել կտրուկ նվազում:

- Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդված) 2018 թվականին դատապարտվել է 68 անձ, իսկ 2019 թվականին՝ 90, աճը՝ 22-ով (90-68=22) անձ (32,3%):

- Դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդված) 2018 թվականին դատապարտվել է 11 անձ, իսկ 2019 թվականին՝ 15, աճը՝ 4 (15-11=4) անձ (36,4%):

- Դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդված) 2018 թվականին դատապարտվել է 8 անձ, իսկ 2019 թվականին՝ 9, աճը՝ 1 (9-8=1) անձ:

- Ավազակության համար (ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդված) 2018 թվականին դատապարտվել է 5 անձ, իսկ 2019 թվականին՝ 7, աճը՝ 2 (7-5=2) անձ:

- Խարդախության համար (ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդված) 2018 թվականին դատապարտվել է 67 անձ, իսկ 2019 թվականին՝ 83, աճը՝ 16 (83-67=16) անձ (23,9%):

- Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու կամ պատրաստելու նպատակով կամ դրանց ապօրինի իրացման համար (ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդված) 2018 թվականին դատապարտվել է 20 անձ, իսկ 2019 թվականին՝ 30, աճը՝ 10 (30-20=10) անձ (50%):

-Պետական սահմանն ապօրինի հատելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդված) 2018 թվականին դատապարտվել է 15 անձ, իսկ 2019 թվականին՝ 16, աճը՝ 1 (16-15=1) անձ:

- Ծառերի, թփերի և բուսածածկի ապօրինի հատման համար (ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդված) (վերնագիրը խմբ. 10.07.19 ՀՕ-120-Ն) 2018 թվականին դատապարտվել է 20 անձ, իսկ 2019 թվականին՝ 40, աճը՝ 20 (40-20=20) անձ (100%):

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող միջնորդություններ

2019 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացված 21698 միջնորդություններից 19082-ը (88%) վերաբերել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին, որից 1984-ը (10,4%) (1984:19082*100=10,4%) հանդիսացել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն: Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին 1984 միջնորդություններից 1802-ը (90,8%) 1802:1984*100=90,8%) բավարարվել է, 1-ը (0,05%) (1:1984*100=0,05%) բավարարվել է մասնակի, 176-ը (8,8%) (176:1984*100=8,8%)՝ մերժվել, 2-ը (0,1%) (2:1984*100=0,1%) թողնվել է առանց քննության, 2-ը (0,1%) վերադարձվել է իսկ 1-ը (0,05%) 2019 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ: Նույն ժամանակահատվածում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվել է գրավը՝ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին 1150 միջնորդություն, որից 198-ը (17,2%) բավարարվել է, 932-ը (81%)՝ մերժվել, 6-ը՝ թողնվել է առանց քննության, 6-ը միացվել է

մեկ վարույթում, իսկ 8-ը՝ 2018 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

*Համեմատության կարգով նշենք, որ 2018 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում սկսված 22474 միջնորդություններից 17400-ը (77,4%) վերաբերել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին, որից 2044-ը (11,7%) (2044:17400*100=11,7%) հանդիսացել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն: Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին 2044 միջնորդություններից 1935-ը (94,7%) 1935:2044*100=94,7%) բավարարվել է, 9-ը (0,5%) (9:2044*100=0,5%) բավարարվել է մասնակի, 90-ը (4,4%) (90:2044*100=4,4%)՝ մերժվել, 7-ը (0,3%) (7:2044*100=0,3%) թողնվել է առանց քննության, իսկ 3-ը (0,1%) 2018 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ: Նույն ժամանակահատվածում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում սկսվել է գրավը՝ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց, կիրառելու մասին 906 միջնորդություն, որից 173-ը (19,1%) բավարարվել է, 713-ը (78,7%)՝ մերժվել, 9-ը՝ թողնվել է առանց քննության, 5-ը միացվել է մեկ վարույթում, իսկ 6-ը՝ 2018 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ:*

Այսպիսով, 2019 թվականին ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում սկսված միջնորդությունների թիվն նվազել է 776-ով (3,4%):

ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում 2019 թվականի ընթացքում ստացվել է 4153 վերաքննիչ բողոք՝ 3753 դատական ակտի դեմ *(այսինքն՝ բողոքարկվել է ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից կայացված դատական ակտերի 16,3%-ը (3753:22979*100=16,3%)):* Բերված բողոքներից 1187-ով (28,6%) բողոքարկվել է քրեական գործերով կայացված 1178 դատական ակտ, իսկ մնացած՝ 2966-ով (71,4%) բողոքարկվել է մինչդատական վարույթի նկատմամբ

դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող 2575 դատական ակտ:

Քրեական գործերով բողոքարկված 1178 դատական ակտերով վերաքննիչ վարույթն ավարտվել է 942-ով (80%), այդ թվում՝ 458 (48,6%) դատական ակտ թողնվել է անփոփոխ, 374-ը (39,7%) բեկանվել է, 35-ը (3,7%) թողնվել է առանց քննության, 16-ով (1,7%) վերաքննիչ վարույթը կարճվել է, 40-ով (4,3%) վերաքննիչ բողոքը չի քննարկվել և կիրառվել է համաներում, 19-ով (2%) վերաքննիչ բողոքի վարույթ ընդունելը մերժվել է: Բեկանված 374 ակտերից 50-ով (13,4%) գործն ուղարկվել է ստորադաս դատարան նոր քննության, 324-ով (86,6%) ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխվել կամ կայացվել է գործն ըստ էության լուծող նոր դատական ակտ:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող դատական ակտերի դեմ բերված 2966 բողոքներից բավարարվել է 439-ը (14,8%), մերժվել՝ 1898-ը (64%), 176-ը (5.9%) թողնվել է առանց քննության, 54-ով (1,8%) վերաքննիչ վարույթը կարճվել է, 1-ով (0,03%) գործի վարույթը կասեցվել է, 12-ով (0,4%) վերանայման վարույթի հարուցումը մերժվել է, 11-ով (0,37%) վերադարձվել են, իսկ 375-ը (252 դատական ակտի դեմ) (12,7%) 2019 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Բողոքարկված 3753 դատական ակտի դեմ բերված ընդհանուր 4153 *բողոքներից 1103-ը (26,5%) ներկայացվել է դատախազության կողմից, որոնցից 221 (20%) բողոքի քննություն 2019 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ: Ընթացքը լուծված 882 (1103-221=882) բողոքներից 252-ը (28,6%) բավարարվել է, 591-ը (67%)՝ մերժվել, 8-ով (0,9%) վերաքննիչ վարույթը կարճվել է, 1-ով (0,1%) գործի վարույթը կասեցվել է, իսկ 30-ը (3,4%)՝ թողնվել է առանց քննության:*

Համեմատության կարգով նշենք, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում 2018 թվականի ընթացքում ստացվել է 4216 վերաքննիչ բողոք՝ 4005 դատական ակտի դեմ *(այսինքն՝ բողոքարկվել է ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից կայացված դատական ակտերի 16,6%-ը (4005:24107*100=16,6%)):* Բերված բողոքներից 1601-ով (38%) բողոքարկվել է քրեական գործերով կայացված 1468 դատական ակտ, իսկ մնացած՝ 2615-ով (62%)

բողոքարկվել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող 2537 դատական ակտ:

Քրեական գործերով բողոքարկված 1468 դատական ակտերով վերաքննիչ վարույթն ավարտվել է 1144-ով (77,9%), այդ թվում՝ 550 (48,1%) դատական ակտ թողնվել է անփոփոխ, 390-ը (34%) բեկանվել է, 63-ը (5,5%) թողնվել է առանց քննության, 27-ով (2,4%) վերաքննիչ վարույթը կարճվել է, 40-ով (3,5%) վերաքննիչ բողոքը չի քննարկվել և կիրառվել է համաներում, 74-ով (6,5%) վերաքննիչ բողոքի վարույթ ընդունելը մերժվել է: Բեկանված 390 ակտերից 33-ով (8,5%) գործն ուղարկվել է ստորադաս դատարան նոր քննության, 357-ով (91,5%) ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխվել կամ կայացվել է գործն ըստ էության լուծող նոր դատական ակտ:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող դատական ակտերի դեմ բերված 2615 բողոքներից բավարարվել է 367-ը (14,1%), մերժվել՝ 1569-ը (60%), 252-ը (9,6%) թողնվել է առանց քննության, 64-ով (2,4%) վերաքննիչ վարույթը կարճվել է, իսկ 363-ը (285 դատական ակտի դեմ) (13,9%) 2018 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ:

Բողոքարկված 4005 դատական ակտի դեմ բերված ընդհանուր 4216 բողոքներից 918-ը (21,8%) ներկայացվել է դատախազության կողմից, որոնցից 223 (24,3%) բողոքի քննություն 2018 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ: Ընթացքը լուծված 695 (918-223=695) բողոքներից 213-ը (30,6%) բավարարվել է, 435-ը (62,6%)՝ մերժվել, 21-ով (3%) վերաքննիչ վարույթը կարճվել է, իսկ 26-ը (3,8%)՝ թողնվել է առանց քննության:

Այսպիսով, 2019 թվականի ընթացքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում ստացված բողոքների ընդհանուր թիվը նվազել է 63-ով (4216-4153=63) 1,5% (63:4216*100=1,5%), այդ թվում՝ քրեական գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ բերված բողոքների թիվն նվազել է 414-ով (1601-1187=414) 25,8% (414:1601*100=25,8%), մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին

վերաբերող դատական ակտերի դեմ բերված բողոքների թիվն աճել է 351-ով (2966 2615=351) 13,4% (351:2615*100=13,4%):

Քրեական գործերով ավարտված վերաքննիչ վարույթների թիվը նվազել է 202-ով (1144-942=202) 17,6%, անփոփոխ թողնված դատական ակտերի թիվը նվազել է 92-ով (550-458=92) 16,7%, իսկ բեկանված դատական ակտերի թիվը նվազել է 16-ով (390-374=16) 4,1%:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող դատական ակտերի դեմ բերված բողոքներից բավարարվածների թիվն աճել է 72-ով (439-367=72) 19,6%, մերժված բողոքների թիվն աճել է 329-ով (1898-1569=329) 21%, առանց քննության թողնված բողոքների թիվը նվազել է 76-ով (252-176=76), վերաքննիչ վարույթը կարճելու դեպքերը նվազել է 10-ով (64-54=10) 15,6%:

Այսպիսով, բերված բողոքների ընդհանուր թիվը նվազել է 63-ով (4216-4153=63) 1,4 %, ավարտված վերաքննիչ վարույթների արդյունքում բավարարված բողոքների ընդհանուր թիվն աճել է 56-ով ((374+439=813)-(390+367=757)=56)) 7,4%, իսկ մերժված բողոքների թիվն աճել է 237-ով((458+1898=2356)-(550+1569=2119)=237)) 11,2%:

Դատախազության կողմից բերված բողոքների ընդհանուր թիվն աճել է 185-ով (*1103*-918=185) 20,2%, այդ թվում՝ ավարտված վերաքննիչ վարույթների արդյունքում բավարարված բողոքների թիվն աճել է 39-ով (*252*-213=39) 18,3%, իսկ մերժված բողոքների թիվն աճել է 156-ով (*591*-435=156) 35,9%:

Այսպիսով, ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում 2019 թվականի ընթացքում ավարտված գործերով կայացված 22979 (2483+20496=22979) ***դատական ակտերից բողոքարկվել է 3753-ը՝ 16,3%-ը (3753:22979*100=16.3%), որից բեկանվել է 795-ը (374+439-18=795) 21,2% (813-18=795, նշված 18 թիվը կազմում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից կայացված թվով 18 դատական ակտերը բեկանելու և առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտերին օրինական ուժ տալու դեպքերը), այսինքն՝ ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում 2019 թվականի ընթացքում ավարտված գործերի կայունությունը կազմում է 96,5% (22979-795=22184:22979*100=93,2%), իսկ***

բողոքարկված գործերի կայունությունը կազմում է 78,8% (3753-795=2958:3753*100=78,8%):

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատում 2019 թվականի ընթացքում ստացվել է 1976 վճռաբեկ բողոքներ, որոնցով բողոքարկվել է 1523 դատական ակտ:

Բերված 1976 բողոքներից 447-ը (22,6%) վերադարձվել է, 254-ը (12,9%) ընդունվել է վարույթ, 71-ը (3,6%)՝ թողնվել է առանց քննության, 1030-ով (52,1%) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, 39-ով (2%) մերժվել է վերանայման վարույթի հարուցումը, 135 (6,8%) բողոքի ընթացքը 2019 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Վարույթ ընդունված 254 բողոքներից՝

- 19-ը (վարույթ ընդունվածի 7,5%, ընդհանուր բողոքների 1 %) մերժվել է,

- 112-ը (վարույթ ընդունվածի 44,1%, ընդհանուր բողոքների 5,7%) բավարարվել է ամբողջությամբ,

- 29-ը (վարույթ ընդունվածի 11,4%, ընդհանուր բողոքների 1,5%)՝ բավարարվել է մասնակի,

- 4-ը (վարույթ ընդունվածի 1,6%, ընդհանուր բողոքների 0,2%)՝ բավարարվել է մասնակի, արդյունքում դատական ակտերը թողնվել են անփոփոխ,

- 2-ով (վարույթ ընդունվածի 0,8%, ընդհանուր բողոքների 0,1%)՝ վարույթը կարճվել է,

- 88-ը (վարույթ ընդունվածի 34,6%, ընդհանուր բողոքների 4,4%) 2019 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Ընդ որում, ամբողջությամբ բավարարված հիշյալ 112 բողոքներից 18-ով բեկանվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատական ակտը և օրինական ուժ է տրվել առաջին ատյանի դատարանի դատական ակտին:

Բերված 1976 բողոքներից 417-ը (21,1%) ներկայացվել է ՀՀ գլխավոր դատախազության կողմից, որից 90-ն (21,6%) ընդունվել է վարույթ, 35-ը (8,4%) վերադարձվել է, 5-ը (1,2%) թողնվել է առանց քննության, 240-ով (57,5%) վճռաբեկ

բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, իսկ 47-ի (11,3%) ընթացքը 2019 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Վարույթ ընդունված 90 բողոքներից 33-ը բավարարվել է ամբողջությամբ, 6-ը բավարարվել է մասնակի, 14-ը մերժվել է, իսկ 37-ը 2019 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Բերված 1976 բողոքներից 1559-ը (78,9%) ներկայացվել է դատավարության այլ մասնակիցների կողմից, որից 164-ը (10,6%) ընդունվել է վարույթ, 66-ը (4,2%) թողնվել է առանց քննության, 39-ով (2,5%) մերժվել է վերանայման վարույթի հարուցումը, 412-ը (26,4%) վերադարձվել է ժամկետով, 790-ով (50,7%) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, իսկ 88-ը (5,6%) 2019 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Վարույթ ընդունված 164 բողոքներից 79-ը բավարարվել է ամբողջությամբ, 23-ը բավարարվել է մասնակի, 4-ը բավարարվել է մասնակի և դատական ակտը թողնվել է անփոփոխ, 5-ը մերժվել է, 2-ով վարույթը կարճվել է, իսկ 51-ը 2019 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Համեմատության կարգով նշենք, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատում 2018 թվականի ընթացքում ստացվել է 2213 (ստացված 1984+229 փոխանցված) վճռաբեկ բողոքներ, որոնցով բողոքարկվել է 1544 դատական ակտ:

Բերված 2213 բողոքներից 626-ը (28,4%) վերադարձվել է, 175-ը (7,9%) ընդունվել է վարույթ, 72-ը (3,2%)՝ թողնվել է առանց քննության, 983-ով (44,4%) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, 142-ով (6,4%) մերժվել է վերանայման վարույթի հարուցումը, 2-ն (0,1%) ուղարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան, 213 (9,6%) բողոքի ընթացքը 2018 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ:

Վարույթ ընդունված 175 բողոքներից՝

- 18-ը (վարույթ ընդունվածի 10,4%, ընդհանուր բողոքների 0,8 %) մերժվել է,

- 66-ը (վարույթ ընդունվածի 37,7%, ընդհանուր բողոքների 3%) բավարարվել է ամբողջությամբ,

- 30-ը (վարույթ ընդունվածի 17,1%, ընդհանուր բողոքների 1,3%)՝ բավարարվել է մասնակի,

- 2-ը (վարույթ ընդունվածի 1,1%, ընդհանուր բողոքների 0,1%)՝ բավարարվել է մասնակի, արդյունքում դատական ակտերը թողնվել են անփոփոխ,

- 3-ով (վարույթ ընդունվածի 1,7%, ընդհանուր բողոքների 0,1%)՝ վարույթը կարճվել է,

- 56-ը (վարույթ ընդունվածի 32%, ընդհանուր բողոքների 2,5%) 2018 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ:

Ընդ որում, ամբողջությամբ բավարարված հիշյալ 66 բողոքներից 17-ով բեկանվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատական ակտը և օրինական ուժ է տրվել առաջին ատյանի դատարանի դատական ակտին:

Բերված 2213 բողոքներից 267-ը (12,1%) ներկայացվել է ՀՀ գլխավոր դատախազության կողմից, որից 45-ն (16,8%) ընդունվել է վարույթ, 20-ը (7,5%) վերադարձվել է, 161-ով (60,3%) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, իսկ 41-ի (15,4%) ընթացքը 2018 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ: Վարույթ ընդունված 45 բողոքներից 26-ը բավարարվել է ամբողջությամբ, 4-ը բավարարվել է մասնակի, 1-ը բավարարվել է մասնակի և դատական ակտը թողնվել է անփոփոխ, 2-ը մերժվել է, իսկ 12-ը 2018 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ:

Բերված 2213 բողոքներից 1946-ը (87,9%) ներկայացվել է դատավարության այլ մասնակիցների կողմից, որից 130-ը (6,7%) ընդունվել է վարույթ, 72-ը (3,7%) թողնվել է առանց քննության, 142-ով (7,3%) մերժվել է վերանայման վարույթի հարուցումը, 606-ը (31,2%) վերադարձվել է, 822-ով (42,2%) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, 2-ն (0,1%) ուղարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան, իսկ 172-ը (8,8%) 2018 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ: Վարույթ ընդունված 130 բողոքներից 40-ը բավարարվել է ամբողջությամբ, 26-ը բավարարվել է մասնակի, 1-ը բավարարվել է մասնակի և դատական ակտը թողնվել է անփոփոխ, 16-ը մերժվել է, 3-ով վարույթը կարճվել է, իսկ 44-ը 2018 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ:

Այսպիսով, 2019 թվականի ընթացքում՝ 2018 թվականի համեմատությամբ, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատում ստացված ընդհանուր բողոքների քանակն նվազել է 237-ով (2213-1976=237) 10,7%, բողոքարկված դատական ակտերի թիվը՝ 21-ով (1544-1523=21) 1,4%, ամբողջությամբ բավարարվածների թիվն աճել է 46-ով (112-66=46) 69,7%, իսկ մասնակի բավարարվածների թիվն նվազել է 3-ով (32-29=3) 9,4%:

Դատախազության կողմից բերված բողոքների թիվը ավելացել է 150-ով (417-267=150), ամբողջությամբ բավարարված բողոքների թիվը ավեացել է 3-ով (33-26=7), իսկ մասնակի բավարարված բողոքների թիվը ավեացել է 1-ով (6-5=1):

Դատավարության այլ մասնակիցների կողմից բերված բողոքների թիվն նվազել է 387-ով (1946-1559=387) 19,9%: Դատավարության այլ մասնակիցների կողմից բերված բողոքներից մերժված բողոքների թիվն նվազել է 11-ով (16-5=11), ամբողջությամբ բավարարված բողոքների թիվն աճել է 39-ով (79-40=39), մասնակի բավարարված բողոքների թիվը՝ 0-ով (27-27=0):

Այսպիսով, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում 2019 թվականի ընթացքում ավարտված գործերով կայացված 3533 (942+2591=3533) դատական ակտերից վճռաբեկության կարգով բողոքարկվել է 1523-ը (43,1%), որոնցից բեկանվել է 141-ը (112+29=141) 9,2%, այսինքն՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում 2019 թվականի ընթացքում ավարտված գործերի կայունությունը կազմում է 96% (3533-141=3300:3533*100=96%), իսկ բողոքարկված դատական ակտերի կայունությունը կազմում է 90,7% (1523-141=1382:1523*100=90,7%):

Այսպիսով, քրեական գործերով և միջնորդություններով ընդհանուր կայունությունը կազմում է 96% (Քայլ 1-ին՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից բեկանված դատական ակտերի թիվը՝ 795-ը (374+439=813-18=795) նշված 18 թիվը կազմում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից կայացված թվով 18 դատական ակտերը բեկանելու և առաջին ատյանի դատարանի դատական ակտերին օրինական ուժ տալու դեպքերը), գումարվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից բեկանված դատական ակտերի թվին՝ 123-ին (141-18=123, նշված 18 թիվը կազմում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 18 դատական ակտերը բեկանելու և առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու դեպքերը), սպացվել է 918 բեկանված դատական ակտ: Քայլ 2-րդ՝ ընդհանուր իրավասության դատարաններում ավարտված դատական ակտերի թվից՝ 22979-ից, հանվել է բեկանված դատական ակտերի թիվը՝ 918-ը, սպացվել է 22061, այսինքն՝ 22061 դատական ակտ մնացել է օրինական ուժի մեջ, ուստի դատական ակտերի ընդհանուր կայունությունը կազմում է 96% (22979-918=22061:22979*100=96%):

ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

2019 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվել է 170414 քաղաքացիական գործ, որից՝

- 10333 գործով (6,1%) հայցադիմումը վերադարձվել է,

- 323 գործով (0,2%) հայցադիմումի ընդունումը մերժվել է,

- 156575 (91,8%) գործով հայցադիմումն ընդունվել է վարույթ,

- 3183 (1,9%) հայցադիմումի վերաբերյալ 28.12.2018թ. դրությամբ որոշում չի կայացվել:

Վարույթ ընդունված 156575 գործերից՝

- 85856-ով (54,9%) կայացվել են վճիռներ, այդ թվում՝ հայցի լրիվ բավարարմամբ՝ 66298-ը (վճիռների 77,2%), հայցի մասնակի բավարարմամբ՝ 9237-ը (վճիռների 10,7%), հայցի մերժմամբ՝ 2284-ը (վճիռների 2,7%), վարույթի կարճմամբ՝ 8037-ը (վճիռների 9,4%), ընդ որում՝ կարճված վճիռներից 1595-ով (վճիռների 1,8%, կարճված վարույթների՝ 19,8%) հաստատվել է կնքված հաշտության համաձայնությունը,

- 728 հայց թողնվել է առանց քննության,

<u>(ընդհանուր առմամբ կայացվել է 97240 դատական ակտ՝ 10333+323+85856+728),</u>

- 27 գործերով կայացվել են գործերը մեկ վարույթում միացնելու մասին որոշումներ,

- 69964-ը՝ (ստացված գործերի 41,1%, վարույթ ընդունված գործերի 44,6%) անավարտ է:

Համեմատության կարգով նշենք, որ 2018 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվել է 129941 քաղաքացիական գործ, որից՝

- 20799 գործով (16%) հայցադիմումը վերադարձվել է,

- 272 գործով (0,2%) հայցադիմումի ընդունումը մերժվել է,

- 106617 (82,1%) գործով հայցադիմումն ընդունվել է վարույթ,

- 2253 (1,7%) հայցադիմումի վերաբերյալ 28.12.2018թ. դրությամբ որոշում չի կայացվել:

Վարույթ ընդունված 106617 գործերից՝

- 61304-ով (57,5%) կայացվել են վճիռներ, այդ թվում՝ հայցի լրիվ բավարարմամբ՝ 45538-ը (վճիռների 74,3%), հայցի մասնակի բավարարմամբ՝ 5910-ը (վճիռների 9,6%), հայցի մերժմամբ՝ 2874-ը (վճիռների 4,7%), վարույթի կարճմամբ՝ 6982-ը (վճիռների 11,4%), ընդ որում՝ կարճված վճիռներից 986-ով (վճիռների 1,6%, կարճված վարույթների՝ 14,1%) հաստատվել է կնքված հաշտության համաձայնությունը,


